ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

ի պատասխան Ձեր 29.10.2024թ. հ. 334-2024թ. գրության՝ Շենգավիթ վարչական շրջանի Չեխովի փողոցի հ.15 շենքի նկուղի սեփականաշնորհման կապակցությամբ, տեղեկացվում է.

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են շենքը կրող կառուցվածքները, շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), նկուղները, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակները, աստիճանները, վերելակները, վերելակային և այլ հորերը, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումներն ու տարածքները, որոնք օրենքով նախատեսված կարգով չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ քննարկվող նկուղային տարածքը հանդիսանում է բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող տարածք, տեղեկացվում է, որ բարձրացված հարցի կարգավորումը Երևանի քաղաքապետարանի լիազորությունների և իրավասությունների շրջանակներից դուրս է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ